

խազանող ազգային-եկեղեցական այս մեծ յօրեկանին, հայ եկեղեցու և ժողովրդի բարգաւաճման և բարօրութեան համար, մազթելով որ եկող 1913 թ. հոկտ. 12-ին, երբ մենք նորից կը գումարվինք այստեղ աւելի մեծ շուքով և համազգայնօրէն տօնելու համազգային մեծ տօնը, իրագործված լինի այն մեծ ակտը, որով նորին Վեհափառութիւնը կամեցաւ յաւերժացնել այս մեծ տօնը, այն է՝ իրագործված լինի դպրոցական ֆօնդը:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԹՕԲԵԼԵԱՆԻ ՇՈՒՐՁԸ

(Նամակ խմբագրութեան)

Թիֆլիս, 13 հոկտեմբերի
«Մշակ» հայ լրագրի խմբագրութեանն: Հանցեք ընդունել ձեր երիտասարդ եղբայրակցից՝ «Утро Тифлиса» թերթի խմբագրութիւնից մտերիմ ողջոյն հայ ժողովրդի կեանքի նշանաւոր դէպքի առիթով — սիրոյ և եղբայրութեան մեծ նախապահակներին, հայկական թարգմանիչ-գործիչներին՝ Մետրոպ Մատոցի և Սահակի ու նախատպագրիչ — Պարզատու մարտի տպագրիչ — Յակոբի պատուին տրվող տօնախմբութիւններին սկզբնաւորութեան առիթով: Փառք և յաւերժ երախտագիտութիւն թէ հայոց լեզուի այդ առաջին կարապետներին և իրանց ժողովրդի մէջ ուսումն տարածողներին և թէ տպագրութեան յետագայ տարածիչներին և աղին վաստակաւորներին, որոնք հազարամայ խժոժութիւններին, վայրագ բնութիւններին մէջ ուսուցանում էին ժողովրդին ճշմարտութեան, բարութեան և սիրոյ խօսքերը:

Ժողովրդի 15-դարեայ կուլտուրական գոյութեան հիմքի վրա կառուցվում է նրա աներկաբայի մեծութիւնը, և մենք, այսօրվայ հանդիսաւոր բոլորին, ակնածութեամբ խնայեցնում ենք մեր գլուխները այդ մեծութեան առաջ և թոյլ ենք տալիս մեզ միանալ երախտագարտ հայ ժողովրդի երախտագիտական զգացումներին դէպի «ոսկէ դարի» հիմնադիրները այդ ժողովրդի գրականութեան մէջ: Փնռք:

«Утро Тифлиса» ամսօրեայ թերթի խմբագրութիւն

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵՇ ԹՕԲԵԼԵԱՆԻ ՏՕՆԱԿԱՆ ՏԱՐՈՒԹԻՒՆԸ ԴՈՒՇԵԹՈՒՆՄ

Դուշեթ, 14 հոկտեմբերի

Ամսիս 13-ին տեղիս հայոց Ս. Աստուածածին եկեղեցում մատուցվեց հանդիսաւոր պատարագ, որից յետոյ կատարվեց հոգեհանգիստ հայ դրամկալութեան անժամ վաստակաւորներին յիշատակին: Ներկայ էին պատարագին տեղիս հայոց եկեղ-ծիս. զբարոցի աշակերտութիւնը՝ իրանց ուսուցիչներին հետ միասին և բազմաթիւ հասարակութիւն:

Պատարագից յետոյ ծխ. դպրոցում եղաւ հանդէս, որը բաց անելով դպրոցի ուսուցիչ Յուսիկ քան. Ապրիլեանը՝ նախ հայերէն և ապա վրացերէն երկարօրէն խօսեց հայ գրերի գիւտի և տպագրութեան պատմութեան մասին, և ապա ներկայ եղող աշակերտութեանը և հանդիսականներին յորդորեց, որ Վրաստանի հայութեան համար այս անապատում՝ չը մտանաւ իրանց մայրենի քաղցր լեզուն, ազգը և բազմաշարչար եկեղեցին, այլ հաստատել մնան նրան. չը նմանվին ազգի դաւաճաններին, որոնք հէնց այստեղ շատ կան, որ չեն սիրում այն, ինչ որ ազգային է, այլ սարսափելի օտարասէր են և այլն: Յետոյ խօսեց զբարոցի վարժուհի օր. Սաթեմիկ Շահազեանը. նա է միջի այլոց շիշտեց, որ մեծ աշակերտները, որոնք շնորհիւ այս ուսում-

նարանի՝ արդէն գիտին իրանց մայրենի լեզուն, այսուհետեւ ի պատիւ այս տօնի՝ տանը և դուրս անպատճառ հայերէն խօսեն, նրմանվին լուսաւոր մարդկութեան և պարտաճանաչ լինեն դէպի ազգային կեանքը:

Բանախօսութիւններից վերջը եղաւ խմբական երգեցողութիւն ու արտասանվեցին մի քանի հայերէն ոտանաւորներ («Մայր Արաքսի ափերով», «Ազատն Աստուած» և այլն):

Հանդէսի վերջը, նախաձեռնութեամբ դպրոցի ուսուցիչներէ. բոլոր աշակերտաշակերտուհիները (32 հ.) և կողմնակի հանդիսականներ ուրախ տրամադրութեամբ և երգեցողութեամբ գնացին էկեղեցւորա դէպի հայոց ս. Գէորգի անտառը: Երբ հասան ծառազարդ բուրբը, այնտեղ, բնութեան ազատ ծոցում, վճիտ աղբիւրի առաջ նախ Յուսիկ քանանան կատարեց հոգեհանգիստ ս. Սահակի, ս. Մեսրոպի և այլ վաստակաւորներին անթառամ յիշատակի համար. վերջը աշակերտութիւնը երգեց միասին «Հայր մերը», և ապա եղան մանկական ուրախ խաղեր: Դրանից յետոյ շքազայնով Հրաշակերտ ուխտատեղիի նշանաւոր վայրերը, էկեղեցւորան շարունակեց իր ճանապարհը դէպի մերձակայ Ռազմավիրական ճանապարհը և ապա մտաւ եղբարք Ապրիլեանների այգին, ուր բոլորն էլ հիւրասիրվեցին խաղողով: Ուսուցիչները յարմար առիթից օգտվելով՝ բացատրեցին սաներին բուսականութեան և ծառերի կեանքի մասին:

Ժ. 5-ին բոլորն էլ ուրախ տրամադրութեամբ վերադարձան իրանց տները:

Կիրակի օրն էլ կատարվեց հայրապետական մաղթանք. ներկայ էր աշակերտութիւնը իւր ուսուցիչներին հետ միասին:

Կարեկեց

ՆԱԽԹԱՅԻՆ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԻ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԹԱՆԳՈՒԹԻՒՆԸ

Անա ամբողջ երեք տարի է, որ ժողովուրդը անտեսապէս տուժում է Նօբէլի ճանկերում, անձայն-անխօս իր գրպանները դատարկելով այդ կովկասեան Բօֆէլէլէրի գրկում, և տնտեսական այս անտանելի դրութեան վրա ոչ մամուլն է ձայն բարձրացնում, ոչ հասարակութիւնն է աղաղակում և ոչ իշխանութիւնն է միջոցներ ձեռք առնում:

Վերջին ժամանակներս նախային արդիւնքների գնբը բարձրացել են չը լաված չափերի և շատերի համար գրեթէ անմատչելի դարձել, և այդ միայն մի մարդու քան հանձրեցի պատճառով, նրա առաջ ընդհանրութեան համար, որ նստած ոսկէ թուժի վրա՝ կշռքի նժարը որ կողմն ուզում է, այնպէս է ծռում:

Ուղիղ 3 տարի առաջ, 1910 թ. հոկտ. 30-ին, Նօբելը բոլոր մանր նախադիւնաբերողներին հետ օրինական կարգով պայմանագրի կապեց, որ ամբողջ Ռուսաստանում կերօսին վաճառման իրաւունքը իրան պատկանի, իսկ նախադիւնաբերողները իրանց արտադրած կերօսինը իրան յանձնեն պայմանագրում որոշված գնով: Պայմանագրի ժամանակամիջոցն էր 6 ամիս՝ մինչև 1911 թ.ի ապրիլի 1-ը:

Յանկարի անսպասելի կերպով կերօսին գինը 14/2 կօպէկից բարձրացաւ 28 կօպէկի, իսկ Նուժ նախթի գինը մնաց նոյնը, և ուսանց մի կօպէկ բարձրանալու. և այդ այն պատճառով, որ ինչքան հնար է շատ կերօսին արտադրեն գործարանատէրերը: Միանգամից այդքան բարձրացնելով կերօսին գինը՝ գործարանատէրերի զայրոյթը շարժեց, քանի որ Նօբելը նրանց տալիս էր միայն նախկին գներից աւելորդ գրօշներ, վայել է յարգելի և անմեղ դատապարտված մարդուն. նստած էր եւ մեծանակեւ անեւ:

Երբ անգործութիւնը նրան յոգնեցրեց և երբ...